ՔԱՂՎԱԾՔ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2-2008

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

2008 թվականի ապրիլի 25-ին, ժամը 11:00-ին Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքի Դե Մալանյի փողոց 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հիմնադիր և միակ բաժնետեր Վարդան Սիրմաքեսը (6250 ձայնի իրավունքով):

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 6250) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովը նախագահում էր Վ. Սիրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2007թ. շահույթի բաշխման մասին:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u> (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 31.12.07թ. դրությամբ կուտակված 359.164.000 (երեք հարյուր հիսունինը միլիոն մեկ հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ շահույթից 80.000.000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ այն դարձնելով 100.000.000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ մնացած 279.164.000 (երկու հարյուր յոթանասունինը միլիոն մեկ հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի բոլոր հարցերով որոշումներն ուժի մեջ են մտնում 2008թ. ապրիլի 26-ից:

Սույն արձանագրությունը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 1 (մեկ) թերթից:

Ժողովի նախագահ՝ *ստորագրություն* Վ. Սիրմաքես

Ժողովի քարտուղար՝ *ստորագրություն* Ա. Սելլեֆյան